որ, իբր թէ, մահմեդականները փութով զինւում են կառավարութեան և քրիստոնեայ բնակչութեան դէմ ոտնձգութիւններ անելու մտադրութեամբ: Որոշ ծրագրով կազմակերպւած և գործադրւող դրդռումի հետեւանքով՝ մի քանի գօրամասեր Երևանում, Ախալցխայում, Կարսում և Թիւրքիայից գրաււած վայրերում ոտնձգութիւններ են կատարել խաղաղ մահմեդականների նկատմամբ: Բաղու քաղաքն ևս գտնւում է պրովոկատորների զգւելի գործունէութեան սպառնալիքի տակ: Այդպիսի խռնակիչ գործունէութիւնը կարող է տալ վատ հետեւանքներ թէ՛ մահմեդականների և թէ՛ Կովկասի ու Նոր Ռուսաստանի բոլոր այլ ազգութիւնների համար: Շուտափոյթ պէտք է ձեռք առնել ամենավճռական միջոցներ չարամիտ պրովոկացիայի դէմ»:

Նոյն իմաստով մի բողոք էլ կոմիտէն ուղարկեց Անդրկ. Առանձին Կոմիտէին, ուր, ի միջի այլոց, ասում էր. «Կոմիտէն համարում է իրեն անպատւած, որ պրովոկացիան արատաւորում է մահմեդականներին, որոնք կողմնակից են ներկայի և ապագայի ռամկավար իդէալներին և համակարծիք են բոլոր բանւորական կուսակցութիւնների հետ: Միութիւնը պահանջում է վերջ տալ պրովոկատորական խայտառակութեան»:

Իսկ Բաղւի «Ենի Իկբալ» թերթը, մայիս 3-ին, շտապում էր բանալ փակագծերը՝ յայտարարելով, թէ մահմեդականների դէմ դաւեր լարողը հայերն են. «Պրովոկացիա սարքողը կովկասեան ազգերից մէկն է... Եթէ ուզենանք իմանալ, թէ ո՞րն է այդ ազգը, ցաւելով պէտք է ասենք, որ այդ ազգը մեր մօտիկ հարեւան ազգայնամոլ հայերն են»:

Որ հայերի կողմից էլ բռնութիւններ ու կամայականութիւններ տեղի էին ունենում, այդ, ի հարկէ, անհերքելի է: Մանաւանդ, թիւրքական սրածութիւնից ու կոտորածներից հրաշքով ազատւած արեւմտահայ գաղթականները երբեմն փորձում էին վրէժ լուծել մահմեդականներից: Տեղ-տեղ թուրքերին հալածում ու ճնշում, երբեմն նաև սպանում էին և կամաւորական խմբերը: Պատերազմի և իթթիհատական վայրագութեանց առաջ բերած դժբախտ երեւոյթներ էին սրանք, որոնք, յաճախ, տարերային ձև էին ստանում և որոնց առաջն առնելը վեր էր մարդկային կարողութիւնից: Սակայն, անճիշտ կը լինէր ասել, որ 1917 և յաջորդ 1918 թւի մահմեդական շարժումները Կովկասում արդիւնք էին հայկական պրովոկացիայի կամ հայ գաղթականների ու խմբերի առաջացրած անկարգութիւնների: Ո՛չ, այդ այդպէս չէ: Երևոյթն աւելի խորն էր. նրա բացատրութիւնը պէտք է որոնել թիւրք քաղաքականութեան և կովկասեան մահմեդականների ա՛յն ժամանակւայ տրամադրութիւնների մէջ: Անպայման, դէպքերի պատճառը թիւրքական «մութ ձեռքն» էր, որ պղտորում էր մտքերը և խռովութիւն առաջ բերում այնտեղ, որտեղ անհրաժեշտ էր գտնում իր շահերի համար: Այդ «մութ ձեռքը» գործակալներ ունէր և՛ Թիֆլիսում, և՛ Կովկասի ուրիշ կենտրոններում, որոնք շատ անգամ պրովոկացիոն խաղեր էին խաղում հանրային անդորրութիւնը խանգարելու համար:

Այսպէս, մայիս 23-ին Թիֆլիսի Բանւ. և Զինւ. Խորհուրդների պաշտօնաթերթում, ինչպէս և ուրիշ թերթերում հրատարակւեց Բասէնի շրջանի ժամանակաւոր կոմիսար և զինւ. գործ. կոմիտէի նախագահ Սպերանսկու մի դրդռիչ հեռագիրը, թէ՝ «Վերջին երկու-երեք շաբաթւայ ընթացքին Բասէնի հովտի գիւղերը գաղթում են թիկունքից բազմաթիւ փախստական